

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/1

4 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանի 06.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ եղեգնաձորի ՏՀՏ պետի 04.09.2014 թ-ի թիվ 126 որոշման դեմ:

Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանը (այսուհետ նաև գանգատաբեր) պետական գրանցումը ստացել է 22.07.2013 թ-ին և զբաղվել է սառը սուրճի և թեյի արտադրությամբ: «Առևտրի և ծառայությանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 9.2-րդ հոդվածի համաձայն, վերջինիս կողմից արտադրված արտադրատեսակների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է:

Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանը Օրենքի 9.3-րդ հոդվածով սահմանված կարգով ձեռք է բերել ընդհանուր հաշվով 600.000 (վեց հարյուր հազար) հատ դրոշմապիտակ, որի համար վճարել է 2.128.800 դրամ: Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանն իր գործնետության ընթացքում իրացրել է ձեռք բերված դրոշմապիտակներին համապատասխան քանակությամբ արտադրատեսակ (600.000 հատ)՝ պահպանելով Օրենքի հոդված 9.4-ով սահմանված դրոշմավորման կանոնները, որի ընդհանուր շջանառությունը, ինչպես ներկայացվել է 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկով, կազմել է 51.754.659, իսկ 30.09.2013 թ-ից ժամանակավորապես դադարեցրել է գործնետությունը 27.09.2013 թ-ին եղեգնաձորի ՏՀՏ ներկայացրած դիմումի համաձայն: Հիմք ընդունելով Օրենքի հոդված 9.6 1 կետի դրույթները, համաձայն որի՝ ՀՀ տարածքում իրացված ապրանքների դրոշմավորման համար օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը (բացառությամբ այն դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարների, որոնք չեն օգտագործվել և չեն վերադարձվել) հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևով դիմումի հիման վրա հաշվանցվում է հարկային պարտավորությունների դիմաց:

Գանգատաբերը 28.09.2013 թ-ին դիմում է ներկայացրել եղեգնաձորի ՏՀՏ օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարից 2013 թ-ի օգոստոս ամսվա համար հաշվարկված և եկամտային հարկի հաշվարկով ներկայացրած եկամտային հարկի պարտավորության դիմաց հաշվանցման համար: 21.10.2013 թ-ին կրկին անգամ դիմում է ներկայացվել օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարի մնացորդը 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի, ինչպես նաև 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկով առաջացած հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման համար, որը եղեգնաձորի ՏՀՏ-ի կողմից չի իրականացվել: Հարկատուն չի տեղեկացվել, որ ներկայացված հաշվանցման դիմումը մերժվել է: Փոխարենը հարկատուի պարտավորություններից նվազեցվել է ընդամենը 569.613 դրամ, իսկ չմարված պարտավորությունների համար հաշվարկվել են տույժեր: Եղեգնաձորի ՏՀՏ կողմից օգտագործված դրոշմապիտակների համար վճարված գումարներից պարտավորությունների դիմաց

հաշվանցել են ընհանուր հաշվով 887.000 դրամ, որը կազմում է 31.07.2013 թ-ին և 09.08.2013 թ-ին դրոշմապիտակների ձեռք բերման համար Օրենքի հոդված 9.3-ի 4-րդ կետի համաձայն դրոշմապիտակների ձեռքբերման հայտի հետ ներկայացված «նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին» հաշվետվության մեջ ներկայացված օգտագործված դրոշմապիտակների համար վճարված գումարին համապատասխան գումար: Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չէ, որ հաշվանցումների կատարման համար օգտագործված դրոշմապիտակների քանակը որոշելու համար հիմք է հանդիսանում դրոշմապիտակների ձեռք բերման հայտի հետ ներկայացվող հաշվետվությունով ներկայացված օգտագործված դրոշմապիտակների քանակը, համաձայն Օրենքի հոդված 9.3-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետի՝ այդ հաշվետվությունում ներկայացվում են նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին տվյալներ: Այսինքն, վերջինիս մեջ ներառված են միայն մինչև նոր դրոշմապիտակների ձեռք բերման համար ներկայացված հայտի օրվա դրությամբ տվյալներ, որը չի կարող տեղեկություն տալ հաշվանցման դիմումի ներկայացման օրվա դրությամբ օգտագործված դրոշմապիտակների քանակի մասին (բացառությամբ այն մասնավոր դեպքի, երբ դիմումը ներկայացվում է դրոշմապիտակների և համապատասխանաբար հաշվետվության ներկայացման օրը), որը հիմք ընդունելով չի պահպանվում Օրենքի հոդված 9.6-ով սահմանված հարկատուի իրավունքը, այն է՝ օգտագործված դրոշմապիտակների համար վճարած գումարը՝ վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևով դիմումի հիման վրա, հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելը: Նման մոտեցմամբ ստացվում է, որ հարկ վճարողը փաստացիորեն կարող է հաշվանցել միայն մինչև նոր դրոշմապիտակների ձեռք բերման համար ներկայացված հայտի օրվա դրությամբ օգտագործված դրոշմապիտակների համար վճարված գումարի չափով գումար, իսկ այդ օրվանից հետո իրացված ցանկացած արտադրատեսակ, անկախ այն փաստից, որ իրացման ժամանակ պահպանվել են Օրենքով և իրավական ակտերով սահմանված բոլոր պահանջները, հաշվանցման ենթակա չեն, որը հակասում է Օրենքի հոդված 9.6-ին: Բացի դա, անհամապատասխանություն է առաջանում նաև «Շրջանառության հարկի» հաշվարկով ներկայացված և Եղեգնաձորի ՏՀՏ-ի կողմից (հիմնավոր համարված) տվյալների միջև, քանի որ «Շրջանառության հարկի» հաշվարկով ներկայացված շրջանառությունն առաջացել է թվով 600.000 հատ արտադրատեսակի իրացումից, իսկ հարկային մարմնի կողմից հիմնավորված է համարվել միայն թվով 250.000 հատ դրոշմապիտակի օգտագործումը: Ելնելով վերջինից կարելի է եզրակացնել, որ հարկատուն մնացած թվով 350.000 հատ արտադրատեսակը իրացրել է՝ խախտելով Օրենքի հոդված 9.1 և (կամ) հոդված 9.4 կետերը, կամ 250.000 հատ արտադրատեսակի իրացումից շրջանառություն հաշվարկելու փոխարեն (որը 09.08.2013 թ-ին՝ հաշվետվություն ներկայացրած օրվա դրությամբ, կազմել է մոտ 22.000.000) ներկայացրել է 600.000 հատ արտադրատեսակի իրացումից շրջանառություն, որը կազմել է 51.754.659 դրամ: Վերջին պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ նման խախտումներ արձանագրված չեն, ինչպես նաև ներկայացված հաշվետվություններում սխալներ չկան: Հարկ է նշել նաև, որ Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանը Օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված բոլոր հաշվարկ-հաշվետվությունները ներկայացրել է համաձայն գործող կարգի և սահմանված ժամկետներում:

Վերոգրյալից ելնելով Եղեգնաձորի ՏՀՏ-ի կողմից խախտվել են Օրենքի հոդված 9.6-ի 1-ին կետի առաջին պարբերությամբ սահմանված հարկ վճարողի իրավունքը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 1-ի 8.3 և 9.2 կետերի դրույթները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գանգատաբերը խնդրում է Եղեգնաձորի ՏՀՏ պետի 04.09.2014 թ-ի թիվ 126 որոշումը համարել չեղյալ, հաշվանցումները կատարել համաձայն հաշվանցման դիմումներում ներկայացված չափերով և ժամկետներում, վերահաշվարկել պարտավորությունները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանի կողմից 23.07.2013 թ-ին, 31.07.2013 թ-ին և 09.08.2013 թ-ին ներկայացվել են «Պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար դրոշմապիտակների ձեռք բերման հայտ»-եր: Վերջիններովս ձեռք են բերվել 0.23 լ տարողությամբ ընդամենը 600.000 հատ դրոշմապիտակներ:

Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանի կողմից ներկայացվել են նաև «Հայաստանի Հանրապետությունում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվություն»-ներ (այսուհետ՝ հաշվետվություն/ներ), որոնք հարկային տեսչությունում մուտք են եղել 31.07.2013 թ-ին և 12.08.2013 թ-ին: Նշված հաշվետվություններում արտացոլվել են ստացված, օգտագործված և չօգտագործված դրոշմապիտակների քանակի վերաբերյալ տվյալները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանի կողմից «Օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման դիմում»-ները (այսուհետ՝ դիմում/ներ), Եղեգնաձորի ՏՀՏ կողմից կատարվել են համապատասխան հաշվանցումները՝ հաշվետվություններում արտացոլված տվյալներին համապատասխան: Այսինքն, Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանի կողմից վերոգրյալ դիմումներով պահանջված այն գումարների հաշվանցումը, որոնց վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել, չի իրականացվել:

Հարկ է նշել նաև, որ դիմումների 6-րդ կետը սխալ է լրացվել: Մասնավորապես, 6-րդ կետում պետք է նշվեին օգտագործված դրոշմապիտակների քանակը, սակայն նշվել են ստացված դրոշմապիտակների ընդհանուր քանակը: Այսինքն, կարելի է փաստել, որ դիմումներում արտացոլված տվյալները, ըստ էության, սխալ են:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2013 թվականի գործող խմբագրությամբ՝ 9.6 հոդվածի 1-ին մասի համաձայն օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը (բացառությամբ այն դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարների, որոնք չեն օգտագործվել և չեն վերադարձվել) հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևով դիմումի հիման վրա հաշվանցվում է հարկային պարտավորությունների դիմաց:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2013 թվականի մայիսի 24-ի «Դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց

հաշվանցման դիմումի ձևը սահմանելու մասին» № 237-Ն հրամանով հաստատված ձևում նշված են տվյալները, որոնց հիման վրա կատարվում է հաշվանցումը: Մասնավորապես՝ 5-րդ տողում նշվում է ժամանակահատվածը, որի համար ՀՀ-ում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հարկային մարմին է ներկայացվել հաշվետվություն, իսկ 6-րդ կետում լրացվում է 5-րդ կետում նշված հաշվետվության օգտագործված դրոշմապիտակների քանակը, առանց արտահանված ապրանքների վրա դրոշմավորման համար օգտագործված դրոշմապիտակների:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցվող գումարի չափը որոշվում է հիմք ընդունելով հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվետվությունում արտացոլված տվյալները: Այսինքն, համապատասխան հաշվանցումը կատարելու համար անհրաժեշտ է որպեսզի Ա/Ձ Ներսիկ Մաթևոսյանի կողմից ներկայացվի հաշվետվություն, ինչպես նաև դիմումներում արտացոլված տվյալները լինեն հավաստի:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 04.09.2014 թ-ի թիվ 126 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Ռ. ՄԱՐԿԱՂՅԱՆ